Հասցե՝ ՀՀ, ք. Երևան 0038, Հալաբյան 5/6
Հեռ՝ (+374 10) 399 855, (+374 55) 560 550
Էլ.փոստ՝ info@gaudit.am
ՀՎՀՀ՝ 00128775

«ՋԻ ԸՆԴ ՔՈ ԱՈՒԴԻՏ ԳՐՈՒՊ»

սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

և նույն ամսաթվին ավարտված տարվա համար

Երևան – 2023

«ՋԻ ԸՆԴ ՔՈ ԱՈՒԴԻՏ ԳՐՈՒՊ»
սահմանափակ պատասխանատվությամբ
ընկերություն
Հայաստանի Հանրապետություն

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲԱԺԻՆ	էջ
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	3
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	4
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	5
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	6
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	7-15

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
«Ջի ընդ Քո Աուդիտ Գրուպ» ՍՊԸ
առ 31 դեկտեմբերի 2022թ

ԱԿՏԻՎՆԵՐ	ԾՆԹ.	31.12.2022 դրամ 000	31.12.2021 դրամ 000
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	3	*673*	*721*
Հետաձգված հարկային ակտիվներ	15	*200*	*80*
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		***873***	***801***
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ		*-*	*111*
Առևտրային դեբիտորական պարտքեր	4	*2,683*	*101*
Ընթացիկ ֆինանսական ներդրումներ	5	*18,654*	*10,000*
Դրամական միջոցներ և համարժեքներ	6	*33*	*1,366*
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		***21,370***	***11,578***
Ընդամենը ակտիվներ		**22,243**	**12,379**
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Սեփական կապիտալ	7		
Կանոնադրական կապիտալ		*50*	*50*
Կուտակված վնաս		*3,726*	*(158)*
Ընդամենը սեփական կապիտալ		**3,776**	**(108)**
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	8	*3,331*	*4,191*
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		***3,331***	***4,191***
Ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	8	*2,498*	*734*
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	9	*9,293*	*5,528*
Շահութահարկի գծով պարտավորություն		*946*	*-*
Հարկերի և պարտադիր վճարների գծով պարտ.-ներ	10	*1,287*	*1,590*
Պահուստներ	11	*1,112*	*444*
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		***15,136***	***8,296***
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		**22,243**	**12,379**

7-ից 15-րդ էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Տնօրեն՝ Լ.Պողոսյան

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

«Ջի ընդ Քո Աուդիտ Գրուպ» ՍՊԸ

2022թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	ԾՆԹ.	2022	2021
		₵ 000	₵ 000
Շարունակական գործունեություն			
Հասույթ	12	*34,083*	*20,428*
Ինքնարժեք	13	*(21,026)*	*(13,863)*
Համախառն շահույթ		**13,057**	**6,565**
Այլ եկամուտներ		-	*5*
Իրացման ծախսեր		*(318)*	-
Վարչական ծախսեր	14	*(6,571)*	*(4,359)*
Այլ ծախսեր		*(722)*	*(445)*
Գործառնական շահույթ (վնաս)		**5,446**	**1,766**
Ֆինանսական ծախսեր		(736)	(170)
Շարունակական գործունեությունից շահույթ (վնաս) մինչև հարկումը		**4,710**	**1,596**
Ընդհատված գործունեություն			
Ընդհատված գործունեությունից շահույթ/վնաս		-	-
Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)	15	*(826)*	*80*
Շահույթ (վնաս) հարկումից հետո		**3,884**	**1,676**
Այլ համապարփակ ֆինանասական արդյունք			
Սեփական կապիտալում ճանաչված օգուտներ		-	-
Տարվա ընդհանուր համապարփակ ֆինանսական արդյունք		**3,884**	**1,676**

7-ից 15-րդ էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Տնօրեն՝ Լ.Պողոսյան

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

«Ջի ընդ Քո Աուդիտ Գրուպ» ՍՊԸ

2022թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

դրամ 000

	Կանոնադրական կապիտալ	Կուտակված շահույթ (վնաս)	Ընդամենը
Մնացորդը առ 31 դեկտեմբեր 2020թ.	**50**	**(1,834)**	**(1,784)**
Տարվա շահույթ	-	1,676	1,676
Մնացորդը առ 31 դեկտեմբեր 2021թ.	**50**	**(158)**	**(108)**
Տարվա շահույթ	-	3,884	3,884
Մնացորդը առ 31 դեկտեմբեր 2022թ.	**50**	**3,726**	**3,776**

7-ից 15-րդ էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Տնօրեն՝ Լ.Պողոսյան

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

«Ջի ընդ Քո Աուդիտ Գրուպ» ՍՊԸ

2022թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	2022	2021
	հազ. դրամ	հազ. դրամ
Դրամական միջոցների տարեսկզբի մնացորդը	***1,366***	***13***
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների մուտքեր		
Հաճախորդներից ստացված դրամական միջոցներ	*42,120*	*28,564*
Ընդամենը գործառնական գործունեությունից մուտքեր	***42,120***	***28,564***
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների ելքեր		
Վճարումներ կրեդիտորներին	*(14,181)*	*(8,737)*
Վճարումներ աշխատակիցներին	*(9,134)*	*(4,974)*
Վճարումներ բյուջե	*(10,513)*	*(4,942)*
Այլ ելքեր	*(63)*	*(83)*
Ընդամենը գործառնական գուրծունեությունից ելքեր	***(33,891)***	***(18,736)***
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	**8,229**	**9,828**
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների մուտքեր		
Տրամադրված փոխառությունների մարում	*23,650*	*14,026*
Ընդամենը ներդրումային գործունեությունից մուտքեր	***23,650***	***14,026***
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների ելքեր		
Ոչ նյութական ակտիվների ձեռքբերման գծով	*(1,076)*	*(1,313)*
Տրամադրված փոխառություններ	*(32,304)*	*(30,551)*
Ընդամենը ներդրումային գործունեությունից ելքեր	***(33,380)***	***(31,864)***
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	**(9,730)**	**(17,838)**
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների մուտքեր		
Ստացված վարկեր և փոխառություններ	*1,638*	*23,826*
Ընդամենը ֆինանսավորման գործունեությունից մուտքեր	***1,638***	***23,826***
Ֆինասավորման գործունեությունից դրամական միջոցների ելքեր		
Ստացված վարկերի և փոխառությունների մարում	*(734)*	*(14,294)*
Վճարված տոկոսներ	*(736)*	*(170)*
Ընդամենը ֆինանսավորման գործունեությունից ելքեր	***(1,470)***	***(14,464)***
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	**168**	**9,363**
Ընդամենը դրամական միջոցներից զուտ հոսքեր	***(1,333)***	***1,353***
Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին	***33***	***1,366***

7-ից 15-րդ էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Տնօրեն՝ Լ.Պողոսյան

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Գործարար միջավայր

«Ջի Ընդ Քո Աուդիտ Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետև՝ Ընկերություն) իրավաբանական անձ հանդիսացող առևտրային կազմակերպություն է:

Ընկերությունն իր գործունեությունն իրականացնում է միայն Հայաստանում, հետևաբար, Ընկերության գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկաները, որոնց բնորոշ են զարգացող շուկայի հատկանիշներ: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակվում են զարգանալ, սակայն կարող են ունենալ տարբեր մեկնաբանություններ և ենթակա են հաճախակի փոփոխությունների, ինչը, այլ իրավական ու ֆինանսական խոչընդոտների հետ մեկտեղ, լրացուցիչ բարդություններ է ստեղծում Հայաստանում գործող ընկերությունների համար:

2019թ. դեկտեմբեր ամսին Չինաստանում բռնկված կորոնավիրուսը (COVID-19), որը 2020թ. մարտ ամսին Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը դասակարգեց որպես համավարակ, իր էական ազդեցություն է ունեցել ոչ միայն Հայաստանի Հանրապետության, այլ նաև համաշխարհային տնտեսության և խոշոր ֆինանսական շուկաների վրա: Գործարար միջավայրի վրա իր ազդեցությունն է թողել նաև Ադրբեջանի Հանրապետության կողմից սանձազերծված պատերազմը: Չնայած կնքված զինադադարի համաձայնագրին՝ դեռևս անորոշ են պատերազմի հետևանքները Հայաստանի տնտեսության վրա երկարաժամկետ առումներով:

Անորոշ է նաև ռուս-ուկրաինական հակամարտության ազդեցությունը հայաստանյան գործարար միջավայրի վրա երկարաժամկետ առումով, այն Հայաստանի տնտեսության տարբեր ոլորտների վրա ազդել է տարբեր կերպ: Ընկերության ղեկավարությունը գտնում է, որ այդ հակամարտության հետևաքները չեն ազդի Ընկերության գործունեության վրա բացասական առումով:

Այնուամենայնիվ՝ վերոնշյալ գործոնները էապես չեն ազդել Ընկերության ընթացիկ գործունեության վրա:

Ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից:

1.2. Ընկերության գործունեության բնույթը

Ընկերությունը հիմնադրվել է 2013 թվականի նոյեմբերի 11-ին և 2014 թվականի փետրվարի 7-ին ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից ստացել է աուդիտորական ծառայությունների իրականացման անժամկետ լիցենզիա (ԱԾ N 099), որը «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությունների արդյունքում 2021թվականի հունվարի 1-ից ուժը կորցրած է ճանաչվել: Ընկերությունը 2020թ դեկտեմբերի 24-ից հանդիսանում է «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության անդամ և գործում է այդ անդամության հիման վրա: Ընկերության պետական գրանցման համարն է՝ 264.110.789513, հարկ վճարողի հաշվառման համարը՝ 00128775:

Ընկերությունը չունի դուստր և կախյալ ընկերություններ, աշխատողների միջին ցուցակային թիվը ֆինանսական տարվա ընթացքում կազմել է 8 մարդ, նախորդ ում՝ 7 մարդ:

Ընկերության գործունեության և իրավաբանական հասցեն է՝

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0038, Հալաբյան 5/6:

2. Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականության և գնահատումների համառոտ ամփոփում

2.1. Համապատասխանությունը

Հաշվապահական հաշվառումը վարվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան: Ֆինանսական հաշվետվությունները կազմվել են համաձայն փոքր և միջին կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՓՄԿ-ների ՖՀՄՍ):

2.2. Չափման հիմքը

Սույն Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով:

2.3. Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթը

Ընկերության համար որպես ֆունկցիոնալ և ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթ ընդունվել է ազգային արժույթը՝ ՀՀ դրամ (դրամ), որը Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս փոխարկելի արժույթ չէ: Ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ:

2.4. Անընդհատությունը

Ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները կազմվել են ելնելով անընդհատության սկզբունքից, որը ենթադրում է ակտիվների իրացում և պարտավորությունների մարում բնականոն գործունեության ընթացքում: Ընկերությունը համարվում է անընդհատ գործող կազմակերպություն և առաջիկայում գործունեության ընդհատում չի նախատեսում:

2.5. Համադրելիությունը

Ընթացիկ ֆինանսական տարվա տվյալները համեմատելի են նախորդ ժամանակաշրջանի համար ներկայացված տվյալների հետ:

2.6. Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները գնահատվել են սկզբնական (ձեռք բերման) արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը: Սկզբնական արժեքը ներառում է հիմնական միջոցների ձեռքբերմանն ուղղակիորեն վերագրելի ծախսումները: Մաշվածությունը հաշվարկվում է ակտիվի սկզբնական արժեքի հիման վրա՝ հանած դրա մնացորդային արժեքը :
Մաշվածությունը ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում գծային հավասարաչափ մեթոդով: Մաշվածությունը սկսվում է հաշվարկվել այն պահից, երբ ակտիվը մատչելի է դառնում օգտագործման համար :

Հիմնական միջոցների համար սահմանվել են մաշվածության հետևյալ ժամկետները՝

Հիմնական միջոցի տեսակը	Ամորտիզացիոն ժամկետ (տարի)
Գրասենյակային գույք	8
Համակարգչային տեխնիկա	1
Այլ հիմնական միջոցներ	1

Մաշվածության հաշվարկի մեթոդները, օգտակար ծառայության ժամկետները և մնացորդային արժեքները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջում և անհրաժեշտության դեպքում՝ ճշգրտվում:

2.7. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Որպես դրամական միջոցներ են ճանաչվել դրամարկղում առկա կանխիկ դրամը, Հայաստանի Հանրապետության բանկերում տեղաբաշխված ընթացիկ հաշիվները:

2.8. Առևտրային և այլ դեբիտորական ու կրեդիտորական պարտքեր

2.8.1. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Ընթացիկ դեբիտորական պարտքերը սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով: Հետագայում դրանք հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ հանած արժեզրկման պահուստը: Առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման պահուստը ստեղծվում է այն ժամանակ, երբ առկա է օբյեկտիվ ապացույց, որ Ընկերությունը սկզբնապես սահմանված ժամկետներում չի կարող հավաքագրել վերադարձման ենթակա բոլոր գումարները: Դեբիտորի զգալի ֆինանսական դժվարությունները, վճարման հետաձգումը և վճարումների ուշացումները ցուցանիշ են այն բանի, որ առևտրային դեբիտորական պարտքն արժեզրկված է: Պահուստի գումարը ակտիվի հաշվեկշռային արժեքի և սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված ապագա դրամական հոսքերի ներկա արժեքի տարբերությունն է:

Պահուստի մնացորդը ճշգրտվում է հաշվետու ժամանակաշրջանի համապարփակ ֆինանսական արդյունքերի հաշվետվությունում՝ ծախսի կամ եկամտի ճանաչման միջոցով: Հաճախորդի հաշվի մնացորդից դուրս գրվող ցանկացած գումար նվազեցվում է առկա կասկածելի դեբիտորական պարտքի պահուստից: Բոլոր դեբիտորական պարտքերը, որոնց հավաքագրումը գնահատվում է անհավանական, դուրս են գրվում: Հաշվետու տարում Ընկերությունը դեբիտորական պարտքերի պահուստ չի ձևավորել՝ կասկածելի պարտքերի բացակայության պատճառով:

2.8.2. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով, հետագայում չափվում են ամորտիզված արժեքով:

2.9. Հասույթի ճանաչում

Հասույթը չափվում է ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքով: Հասույթը նվազեցվում է պատվիրատուներից վերադարձումների, զեղչերի և այլ նմանատիպ պահուստների գծով գնահատված գումարների չափով:
Ծառայությունների մատուցման պայմանագրից հասույթը ճանաչվում է՝ պայմանագրի ավարտվածության աստիճանի հիման վրա: Պայմանագրի աշխատանքների ավարտվածության աստիճանը որոշվում է պայմանագրի աշխատանքների ուսումնասիրությամբ, որի ժամանակ կողմերի միջև կնքնվում է ծառայությունների հանձնման-ընդունման ակտ: Եթե պայմանագրի արդյունքը չի կարող արժանահավատորեն գնահատվել, ապա Ընկերությունը ճանաչում է հասույթը միայն պայմանագրի փաստացի կրած այն ծախսումների չափով, որոնք հավանական է, որ կփոխհատուցվեն և ծախսումները որպես ծախս այն ժամանակաշրջանում, որի ընթացքում կատարվել են:
Պայմանագրի արդյունքը կարելի է ար¬ժանահավատորեն գնահատել, եթե բավարարվեն հետևյալ բոլոր պայմանները՝

1. հնարավոր է արժանահավատորեն չափել հասույթի գումարը.

2. հավանական է, որ գործարքի հետ կապված տնտեսական օգուտները կհոսեն դեպի կազմակերպություն,
3. հնարավոր է արժանահավատորեն չափել հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործարքի ավարտվածության աստիճանը
4. հնարավոր է արժանահավատորեն չափել գործարքի համար կատար¬ված և գործարքն ավարտելու համար անհրաժեշտ ծախսումները

2.10. Վարձակալություն

Վարձակալությունը դասակարգվում է որպես ֆինանսական վարձակալություն, երբ վարձակալության պայմաններով սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու օգուտներն փոխանցվում են վարձակալին: Մյուս բոլոր վարձակալությունները դասակարգվում են որպես գործառնական վարձակալություն: Ընկերությունը Ֆինանսական վարձակալությամբ տրված և ստացված ակտիվներ չունի:

Գործառնական վարձակալության վճարումները գծային հիմունքով ճանաչվում են որպես ծախս վարձակալության ժամկետում, բացառությամբ, երբ մեկ այլ սիստեմատիկ հիմունք ավելի լավ է ներկայացնում վարձակալված ակտիվի տնտեսական օգուտների սպառման ժամանակային գրաֆիկը: Գործառնական վարձակալության ներքո առաջացող պայմանական վարձավճարները ճանաչվում են որպես ծախս այն ժամանակաշրջանում, երբ դրանք առաջանում են:

2.11. Շահութահարկ

Շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Ընթացիկ և հետաձգված հարկերը ճանաչվում են շահույթում կամ վնասում, բացառությամբ այն մասի, որը վերաբերում է ձեռնարկատիրական գործունեության միավորներին կամ ուղղակիորեն սեփական կապիտալում կամ այլ համապարփակ եկամտում ճանաչված տարրերին:
Ընթացիկ հարկը տարվա շահութահարկի գծով ակնկալվող վճարման ենթակա հարկի գումարն է, որը հաշվարկվում է կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ և ներառում է նախորդ տարիների վճարման ենթակա հարկերի գծով կատարված ճշգրտումները:

2.12. Պահուստներ

Պահուստը ճանաչվում է, երբ ընկերությունը որպես անցյալ դեպքերի արդյունք, ունի ընթացիկ իրավական կամ կառուցողական պարտավորություն՝ որպես ածանցյալ դեպքերի արդյունք, որը հնարավոր է արժանահավատորեն գնահատել, և հավանական է, որ այդ պարտավորությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Պահուստները որոշվում են ակնկալվող դրամական միջոցների ապագա հոսքերը զեղչելով հարկումից առաջ այն դրույքով, որն արտացոլում է տվյալ շուկայում դրամի ժամանակային արժեքը և այդ պարտավորությանը հատուկ ռիսկերը:

3. Հիմնական միջոցներ

	Գրասենյակային գույք	Համակարգչային տեխնիկա	Այլ հիմնական միջոցներ	Ընդամենը
Սկզբնական արժեք				
Առ 01.01.2022թ.	**3,380**	**239**	**350**	**3,969**
Գնում	137	644	243	1,024
Օտարում				-
Առ 31.12. 2022թ.	**3,517**	**883**	**593**	**4,993**
Մաշվածություն				
Առ 01.01.2022թ.	**3,067**	**86**	**95**	**3,248**
Հաշվարկ	321	426	325	**1,072**
Օտարում				-
Առ 31.12. 2022թ.	**3,388**	**512**	**420**	**4,320**
Հաշվեկշռային արժեք				
Առ 31.12.2021թ.	**313**	**153**	**255**	**721**
Առ 31.12.2022թ.	**129**	**371**	**173**	**673**

Ընկերության կողմից հաշվետու տարում հաշվարկված մաշվածության գումարից 717 հազար դրամը ներառվել է մատուցված ծառայությունների ինքնարժեքում, իսկ 355 հազար դրամը ներառվել է վարչական ծախսերի կազմում, իսկ 631 հազար դրամը՝ մատուցված ծառայությունների ինքնարժեքում:

4. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

	31.12.2022	31.12.2021
Դեբիտորական պարտքեր ծառայությունների գծով	2,600	-
Տրված կանխավճարներ	83	55
Այլ	-	46
Ընդամենը	**2,683**	**101**

5. Ընթացիկ ֆինանսական ներդրումներ

	31.12.2022	31.12.2021
Տրամադրված փոխառություններ	18,654	10,000
Ընդամենը	**18,654**	**10,000**

Փոխառությունները տրամադրվել են Ընկերության կապակցված կողմերին՝ անտոկոս և գրավով չապահովված, մինչև մեկ տարի մարման ժամկետով փոխառության պայմանագրերի հիման վրա:

6. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

	31.12.2022	31.12.2021
Կանխիկ դրամական միջոցներ դրամարկղում	30	1,357
Դրամական միջոցներ հաշվարկային հաշիվներում	3	9
Ընդամենը	**33**	**1,366**

7. Սեփական կապիտալ

6.1. Կանոնադրական կապիտալ

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ թողարկված և ամբողջությամբ վճարված կանոնադրական կապիտալը կազմում է 50,000 դրամ և բաղկացած է 50 բաժնեմասից՝ յուրաքանչյուրը 1000 դրամ անվանական արժեքով:

6.2. Չբաշխված շահույթ և շահաբաժիններ

Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն Ընկերության բաշխման ենթակա պահուստները սահմանափակվում են Ընկերության Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերի համաձայն պատրաստված ֆինանսական հաշվետվություններում գրանցված չբաշխված շահույթի մնացորդով: 2022թ-ին և սույն ֆինանսական հաշվետվությունների ստորագրման ամսաթվի դրությամբ շահաբաժիններ չեն հայտարարվել և չեն վճարվել:

8. Վարկեր և փոխառություններ

	31.12.2022	31.12.2021
Երկարաժամկետ բանկային վարկեր	3,331	4,191
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ	**3,331**	**4,191**
Երկարաժամկետ բանկային վարկերի ընթացիկ մաս	860	734
Փոխառությունների գծով վճարվելիք գումարներ	1,638	-
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ	**2,498**	**734**
Ընդամենը ընթացիկ և ոչ ընթացիկ պարտավորություններ	**5,829**	**4,925**

Փոխառությունները տրամադրվել են Ընկերության կապակցված կողմերին՝ անտոկոս և գրավով չապահովված, մինչև մեկ տարի մարման ժամկետով փոխառության պայմանագրերի հիման վրա:

9. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

	31.12.2022	31.12.2021
Կրեդիտորական պարտքեր գնումների գծով	490	1,478
Ստացված ընթացիկ կանխավճարներ	7,870	4,050
Այլ կրեդիտորական պարտքեր	933	-
Ընդամենը	**9,293**	**5,528**

10. Հարկերի և պարտադիր վճարների գծով պարտավորություններ

	31.12.2022	31.12.2021
Եկամտային հարկի գծով	701	906
ԱԱՀ-ի գծով	518	613
Այլ	68	71
Ընդամենը	**1,287**	**1,590**

11. Պահուստներ

Այս հոդվածում ներկայացված են աշխատակիցների հատուցումները կուտակված արձակուրդների գծով: Պահուստավորումը կատարվում է յուրաքանչյուր տարեվերջի դրությամբ՝ տարեսկզբի մնացորդի համեմատությամբ աճի կամ նվազման գումարով: Ակնկալվում է, որ դրամական արտահոսքերը տեղի կունենան հաջորդ տարվա ընթացքում՝ հերթական ամենամյա արձակուրդերն օգտագործելիս: Ձեղչման ազդեցությունը համարվել է ոչ էական և պահուստը չափվել է գնահատված դրամական արտահոսքերի անվանական գումարով:

12. Հասույթ

Ծառայությունների մատուցումից հասույթ	- 2022 -	- 2021 -
Աուդիտորական ծառայություններից հասույթ	34,083	19,978
Խորհրդատվական ծառայություններից հասույթ	-	450
Ընդամենը	**34,083**	**20,428**

13. Ինքնարժեք

Մատուցված ծառայությունների ինքնարժեք	- 2022 -	- 2021 -
Աուդիտորական ծառայությունների ինքնարժեք	21,026	13,613
Խորհրդատվական ծառայությունների ինքնարժեք	-	250
Ընդամենը	**13,863**	**13,863**

14. Վարչական ծախսեր

	- 2022 -	- 2021 -
Աշխատանքի վճարման գծով ծախսեր	3,445	1,604
Ոչ ընթացիկ ակտիվների մաշվածության և սպասարկման ծախսեր	1,113	1,341
Մասնագիտական կառույցի անդամավճարներ	908	841
Գրասենյակային և կոմունալ	746	-
Վարձակալական ծախսեր	-	400
Փոստի և հեռահաղորդակցության ծախսեր	64	30
Այլ ծախսեր	295	143
Ընդամենը	**6,571**	**4,359**

15. Շահութահարկ և հետաձգված հարկեր

	- 2022 -	- 2021 -
Ընթացիկ հարկի գծով ծախս	(946)	-
Հետաձգված հարկի գծով եկամուտ	120	80
Շահութահարկի գծով եկամուտ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում	**(826)**	**80**

15.1 Շահութահարկի արդյունավետ հարկային դրույքաչափի համադրում

	- 2022 -		- 2021 -	
	հազ. դրամ	%	հազ. դրամ	%
Շահույթ (վնաս) մինչև շահութահարկով հարկումը	4,710	100%	1,596	100%
Շահութահարկ	- 848	18%	- 287	18%
Չնվազեցվող / (չհարկվող) հոդվածներ	546	-88.4%	- 1,596	-200.0%
Հարկվող շահույթ	**5,256**		**-**	
Ընթացիկ շահութահարկի գծով ծախս համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում	**946**	**-20.1%**	**-**	**0.0%**

15.2. Հետաձգված հարկ

Հետաձգված հարկային ակտիվներ	31.12.2021	Շահույթում կամ վնասում ճանաչված	31.12.2022
աշխատակիցների արձակուրդային պահուստի գծով	80	120	200
Ընդամենը	**80**	**120**	**200**

16. Կապակցված կողմեր

Ընկերության կապակցված կողմերը ներառում են Ընկերության մասնակիցները, հիմնական ղեկավար անձնակազմը և այլն:

16.1 Գործարքներ կապակցված կողմերի հետ

Հաշվետու տարվա ընթացքում Ընկերության և իր կապակցված կողմերի միջև իրականացվել են հետևյալ գործարքները, և հաշվետու ամսաթվի դրությամբ մնացորդները հետևյալն են:

Գործարքներ	2022	2020
Ստացված փոխառություններ	1,638	-
	1,638	**-**

Մնացորդներ	31.12.2022	31.12.2021
Ստացված փոխառություններ	1,638	-
	1,638	**-**

Ստացված փոխառությունը անտոկոս է, մինչև 1 տարի ժամկետով և ապահովված չէ գրավով:

16.2 Առանցքային կառավարչական անձնակազմի փոխհատուցումներ

	- 2022-	- 2021-
Աշխատավարձ և այլ հատուցումներ	3,243	1,110
Ընդամենը	**3,243**	**1,110**

17. Պայմանական դեպքեր

ա) Դատական գործեր

Պետական մարմինների և տնտեսավարող սուբյեկտների կողմից ընդդեմ Ընկերության չեն ներկայացվել այնպիսի հայցադիմումներ, որոնք կարող են էական սպառնալիք հանդիսանալ վերջինիս նորմալ գործունեության համար:

բ) Պայմանական պարտավորություններ

Ընկերությունը հաշվետու ամսաթվի դրությամբ չունի այլ անձանց տրամադրած երաշխավորություններ, երաշխիքներ և այլ պայմանական պարտավորություններ:

գ) Գրավադրված ակտիվներ

Ընկերությունը գրավադրված ակտիվներ չունի:

18. Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր

Ճշգրտող դեպքեր կամ էական չճշգրտող դեպքեր տեղի չեն ունեցել հաշվետու ամսաթվից հետո մինչև վավերացման ամսաթիվը ընկած ժամանակահատվածում:

19. Ֆինանսական հաշվետվությունների հաստատում

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2023թ. ապրիլի 29-ին՝ Ընկերության տնօրեն Լավրենտի Պողոսյանի կողմից: